Ձևի պարագա	Ցույց է տալիս գործողության կատարման ձևը:	Ինչպե՞ս	Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար:
Տեղի պարագա	Բայական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության կատարման տեղը:	որտե՞ղ	Ես թողել եմ հեռվում դալարագեղ այգին:
Ժամանակի պարագա	Ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը:	Ե՞րբ, երբվանից	Փողոցն անցնելիս սայթաքեց:
Չափ ու քանակի պարագա	Ցույց է տալիս գործողության կատարման չափը , աստիճանը:	Ինչքա՞ն , որքա՞ն	Գրավիչ են դարձյալ քո աչքերը ջինջ:
Պատճառի պարագա	Ցույց է տալիս գործողության կատարման պատճառը:	Ինչի՞ց, ի՞նչ պատճառով	Տիկինը սարսռաց սեփական մտքից:
Պայմանի պարագա	Ցույց է տալիս գործողության կատարման պայմանը:	Ի՞նչ պայմանով, ո՞ր դեպքում	Քո մերժման դեպքում նրանք կհայտնվեն անելանելի դրության մեջ:
Նպատակի պարագա	Ցույց է տալիս գործողության կատարման նպատակը:	Ինչո՞ւ , ինչի՞ համար, ի՞նչ նպատակով	Ծտապում էր՝ սեղմելու այդ մեծ բարեգործի ձեռքը: